

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ և Էկոլոգիայի Բնապահպանություն և բնօգտագործում ամբիոնի
բենչմարկինգի համար անհրաժեշտ դասավանդվող առարկայի համեմատական
բնութագիր

Գործընկեր ԲՈՒՀ – *Իտալիայի Տուշայի համալսարան*

Դեպարտամենտ – Շրջակա միջավայրի և գյուղատնտեսական գիտությունների

Առարկայի անվանումը ԳԿՄԿ-ում – Շրջակա միջավայրի երկրաքիմիա

Առարկայի անվանումը գործընկեր ԲՈՒՀ-ում – Սեդիմենտոլոգիա և երկրաքիմիա –
նախատեսված ծովային էկոլոգիա մասնագիտության համար

Դասավանդող - երկրաբ. գիտ. դոկտոր պրոֆեսոր Ա. Սաղաթեյան

Հոդերի քիմիա, կենսաքիմիա և երկրաքիմիա - գյուղատնտեսական և շրջակա
միջավայրի գիտությունների մագիստրոսական ծրագրի համար

Իտալիայի Տուշայի համալսարանի առարկայական ծրագրերի փիլիսոփայությունն
ունի կիրառական-շուկայական, ինչպես նաև բուն հետազոտական
կողմնորոշվածություն, հետևապես մագիստրոսական կրթության կազմակերպումն
անմիջական կապի մեջ է հիմնարար և կիրառական հետազոտությունների հետ,
որոնք իրականացվում են Իտալիայի Տուշայի համալսարանում: Այս առումով ՀՀ
ԳԱԱ Էկոլոգիանոսֆերային հետազոտությունների և ԳԿՄԿ համատեղ ամբիոնի
մոդելը նման է Իտալիայի Տուշայի համալսարանի մոդելին այն առումով, որ
գիտական հետազոտությունների և լաբորատորիաների գիտական արդյունքը
ծառայում է նաև կրթության գործընթացին, բացի այդ արդյունքներն օգտագործվում
են ինչպես թեզերի, այնպես էլ դոկտորական հետազոտությունների իրականացման
համար:

Համալսարանի յուրահատկություններից մեկը մի շարք ֆակուլտետների
վերակազմավորման արդյունքում ձևավորված ինքնավար դեպարտամենտներ են,
որոնց ինչպես հետազոտական աշխատանքները, այնպես էլ կրթական գործընթացն

ապահովվում է միջառարկայան մոդելով: Վերջինս կարող է օրինակ ծառայել ոչ միայն ՀՀ ԳԱԱ-ին, այլև հարակից մասնագիտություններով այլ ԲՈՒՀ-երի հետ համագործակցության պլատֆորմ ստեղծելու առումով:

Օրինակ ագրարային, բնական գիտությունների, ինչպես նաև էկոլոգիայի և կայուն զարգացման ֆակուլտետների միավորման արդյունքում ձևավորվել են երեք դեպարտամենտներ, որոնք բնապահպանական, ագրարային և սննդի անվտանգության տարբեր խնդիրների հետազոտությունները և կրթության գործընթացն իրականացնում են համատեղ, քանի որ նշված ուղղությունները սերտորեն կապված են: Ներկայումս ՀՀ ԳԱԱ-ն խորացնում է իր համագործակցությունը Հայաստանի պետական ագրարային համալսարանի հետ, և ագրոկենսաբանական և էկոլոգիայի, ինչպես նաև շրջակա միջավայրի և սննդամթերքի անվտանգության միջառարկայական նմանատիպ ամբիոնը կարող է գերազանց օրինակ լինել ինչպես միջառարկայական գիտական հետազոտությունների, այնպես էլ կրթության գործընթացի միջոցիցիայլինային մոտեցման ապահովման համար:

Հետաքրքրական է նաև առարկայի դասավանդման և գիտական հետազոտությունների առանձնահատկությունը: Երկրաքիմիայի այն մասը, որը վերաբերում է շրջակա միջավայրին, պարենային համակարգերի հետազոտությանը, հողերի երկրաքիմիական առանձնահատկությունների ուսումնասիրությանը, ներառվել է հողերի հետազոտման լաբորատորիայի մեջ, իսկ առարկան՝ հողերի քիմիային և կենսաքիմիային և դասավանդվում է ըստ հետազոտման օբեկտի:

Հետաքրքիր է նաև միջգերատեսչական վերջին հետազոտությունները՝ Խաղողագործական զոնավորումը և գինիների աշխարհագրական հետազոտությունը՝ հողերի երկրաքիմիական առանձնահատկությունների

վերլուծության մոդելով: Չեզանազեի (Լացիո) դեպքի ուսումնասիրություն խորագրով թեման իրականացվում էր երկրաքիմիայի և քարտեզագրման, աշխարհագրատեղեկատվական համակարգերի, ինչպես նաև սննդագիտության և բուսածազման մթերքի արտադրության լաբորատորիաների համատեղ ուժերով: Էկոլենտրոնում գործում է և սննդամթերքի անվտանգության, շրջակա միջավայրի երկրաքիմիայի և ԱՏՀ և հեռազննման տեխնոլոգիաների բաժին, և համապատասխան ֆինանսավորման դեպքում կարող է իրականացվել և նմանատիպ հետազոտություններ և դասավանդել միջդիսցիպլինային առարկաներ՝ ներգրավելով տարբեր մասնագետների:

Հողերի քիմիա առարկան դասավանդվում է 48 ժամով տրվում է 6 կրեդիտ, որից հողերի երկրաքիմիային բաժին է ընկնում 24 ժամը:

Շրջակա միջավայրի և կիրառական աշխարհագրություն առարկան դասավանդվում է 66 ժամով $*(48+18$ լաբորատոր) տրվում է 7 կրեդիտ, որից շրջակա միջավայրի երկրաքիմիային բաժին է ընկնում $20+8=28$ ժամը:

Սեդիմենտոլոգիա և երկրաքիմիա առարկան առավելապես վերաբերում է ծովային միջավայրերին և երկրաքիմիական առանձնահատկությունների ուսումնասիրմանը, սակայն նեղ մասնագիտացված է և դասավանդվում է Չիվիտավեկիա ծովափնյա քաղաքում:

Կան մի շարք հիմնախնդիրներ, որոնք ցանկալի կլինի ներառել ուսումնական ծրագրում, սակայն հաշվի առնելով որ ներկայումս ամբիոնում որակավորվում են բացառապես բնապահպանություն և բնօգտագործում մասնագիտությամբ, արժեքավոր կլինի ներառել կիրառական երկրաքիմիա առարկան, մասնավորապես

պատշաճ գյուղատնտեսական պրակտիկա (GlobalGAP) ստանդարտի
երկրաքիմիական հետազոտությունների մեթոդները:

Ավարտելով հարկ է նշել, որ վերը բերված մոտեցումները հնարավոր կլինի կիրառել
միայն բարձրագույն որակավորման ծածկագրերը միջազգային գործնականին
համապատասխանեցնելու պարագայում:

Կազմեց՝ դասախոս

Ա. Սաղաթեյան